ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 60-Ա/3 «14» 02 2025թ.

«ՖՈՐ ԻՎԵՆԹ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-25/11» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2025 թվականի հունվարի 14-ի նիստի արձանագրությունն առ այն, որ «ՖՈՐ ԻՎԵՆԹ» ՍՊԸ-ին փոխկապակցված անձը («ՖՈՐԻՎԵՆԹ» ՍՊԸ-ն՝ 17.12.2024 - 17.12.2026թթ ժամանակահատվածում) գտնվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, սակայն «ՖՈՐ ԻՎԵՆԹ» ՍՊԸ-ն սույն ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.3 կետի համաձայն, Հավելված 1 դիմում-հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ իր հետ փոխկապակցված անձինք բավարարում են հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, ուստի հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությունը և 19-րդ ենթակետի պահանջները՝ «ՖՈՐ ԻՎԵՆԹ» ՍՊԸ-ի գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող և այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման, ինչպես

նաև ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2–րդ մասով ու «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ՖՈՐ ԻՎԵՆԹ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01356304, գործունեության հասցեն՝ ք.Երևան, Բաշինջաղյան 171շ, բն 8) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2/14/2025

X

ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Signed by: HAKOBYAN HASMIK 5610800161 **ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ**